



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 1 (33)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2005 թվականի ապրիլի 11-ից

Երեւան 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**ՄԱՍ 1**

ԳՅՈՒՏԵՐ	5, 107
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 109
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	25, 125
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	27, 127
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	31, 131
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	33, 133
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	57
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման	
նշանների մասին	59
ՑՈՒՑԻՉՆԵՐ	93
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	97
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	137

ՄԱՍ 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	5
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման	
նշանների մասին	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.armpatent.org>

E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**ЧАСТЬ 1**

ИЗОБРЕТЕНИЯ	5, 107
Сведения о выданных патентах	7, 109
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	25, 125
Сведения о выданных патентах	27, 127
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	31, 131
Сведения о выданных патентах	33, 133
ТОВАРНЫЕ ЗНАКИ	57
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	59
УКАЗАТЕЛИ	93
СООБЩЕНИЯ	97
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	137

ЧАСТЬ 2

ТОВАРНЫЕ ЗНАКИ	5
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	7

CONTENTS**PART 1**

INVENTIONS
Information on granted patents
UTILITY MODELS
Information on granted patents
INDUSTRIAL DESIGNS
Information on granted patents
TRADE MARKS
Information on registered trade marks and service marks
INDEXES
REPORTS
TWO-LETTER CODES

PART 2

TRADE MARKS
Information on registered trade marks and service marks

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատու, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A01C 3/00 (11) 1558 (13) A2
(21) P20040035 (22) 15.03.2004
(42) 11.06.2004
(71) Էրնեստ Ղազարյան (AM), Ալի Նադեր (AM)
(72) Էրնեստ Ղազարյան (AM), Ալի Նադեր (AM)
(73) Էրնեստ Ղազարյան, Երեւան, Տպագրիչների 5, բն. 19 (AM), Ալի Նադեր, Երեւան, Վաղարշյան 24/2, բն. 52 (AM)
(54) Կենսաէներգետիկական համալիր
(57) Գյուտը վերաբերում է օրգանական թափոնների վերամշակման սարքերին եւ կարող է կիրառվել գյուղատնտեսությունում:

Կենսաէներգետիկական համալիրն ունի երկու խցիկ, բեռնման, կենսազանգվածի հեռացման եւ գազահեռացման խողովակներ: Համալիրն ունի նաեւ էներգիայի սնման աղբյուր, գլանաձեւ խցիկներից մեկում տեղադրված դարձափոխային էլեկտրական շարժիչով կենսազանգվածի մեխանիկական խառնիչ, որի թիակների վրա նախատեսված են ելուններ, իսկ խցիկի պատերի վրա 90 աստիճան անկյան տակ հատվող գլանաձեւ խցիկի տրամագծերի ծայրերում տեղադրված են չորս երկայնական ձողեր, որոնց վրա միմյանցից նույն հեռավորության վրա ամրակցված են հողակապեր, իսկ հողակապերին ամրակցված են ուղղորդիչ ելուններ: Երկրորդ խցիկում տեղադրված է հարթ մխոց, որի կենտրոնը ամրակցված է ներծող սուլենոիդի գլանաձեւ խարսխի ծայրին, իսկ մխոցը հակառակ կողմից միակցված է հետադարձ զսպանակին, ընդ որում առաջին եւ երկրորդ գլանաձեւ խցիկների միջեւ տեղադրված են անշարժ եւ շարժական միջնապատեր, որոնց վրա նախատեսված են անցքեր, որոնք շեղված են միմյանց նկատմամբ անցքի տրամագծով:

Բարձրացվում է կենսազանգվածի խմորման ինտենսիվությունը, ավտոմատացվում է տեխնոլոգիական պրոցեսը, 2 նկ.:

(51) 7 A01G 23/10 (11) 1559 (13) A2
(21) P20030160 (22) 23.12.2003
(42) 11.06.2004
(71) Արման Հովհաննիսյան (AM), Աննա Գրիգորյան (AM)
(72) Արման Հովհաննիսյան (AM), Աննա Գրիգորյան (AM)
(73) Արման Հովհաննիսյան, Երեւան, Մալյան 9, բն. 20 (AM), Աննա Գրիգորյան, Երեւան, Մալյան 9, բն. 20 (AM)
(54) Մակակտրվածքների կատարման եղանակ կաուչուկատու բույսի վրա
(57) Գյուտը վերաբերում է անտառտնտեսությանը, մասնավորապես՝ մակակտրվածքների կատարման եղանակներին կաուչուկատու բույսերի վրա:

Մակակտրվածքները կատարում են յուրաքանչյուր երկու օրը մեկ անգամ: Սկզբից ցողունի գազաթի վրա կատարում են հորիզոնական մակակտրվածքներ եւ յուրաքանչյուր նոր մակակտրվածքը կատարում են նախորդից 2-3 սմ ներքեւ: Ընդ որում որպես բույս օգտագործում են իշակաթնուկը:

Պարզեցվում է կաուչուկային լատեքսի հավաքման եղանակը:

(51) 7 A23B 7/00 (11) 1560 (13) A2
A23B 7/02
(21) P20040061 (22) 25.05.2004
(42) 11.08.2004
(71) Աշոտ Տեր-Վարդանյան (AM)
(72) Աշոտ Տեր-Վարդանյան (AM)
(73) Աշոտ Տեր-Վարդանյան, Երեւան, Մարշալ Բաղդամյան պող. 1-ին փակուղի 14, բն. 87 (AM)
(54) Գյուղատնտեսական մթերքի պահպանման եղանակ

(57) Գյուղատնտեսական մթերքը ջրագրվում են 5-12%-ով՝ ցանկացած հայտնի եղանակով, ապա սառեցնում այն 0-(-20)°C ջերմաստիճանի պայմաններում: Որպես գյուղատնտեսական մթերք, գերադասելիորեն, օգտագործում են ծիրան կամ դեղձ:

Երկարում է գյուղատնտեսական մթերքի պահպանման ժամկետը:

(51) 7 A23F 3/34 (11) 1561 (13) A2
A23L 2/00
(21) P20040074 (22) 16.06.2004
(42) 13.09.2004
(71) Արմեն Սահակյան (AM)
(72) Արմեն Սահակյան (AM)
(73) Արմեն Սահակյան, Երեւան, Հ. Հովհաննիսյան 119, բն. 27 (AM)
(54) Թեյի փոխարինիչի բաղադրանյութ «Կենարար ծաղկաթեյ»
(57) Հայտարկվում է թեյի փոխարինիչի բաղադրանյութ, որը ներառում է (զանգվ. %).՝ անանուխ երկարատերեւի՝ 15-25, սրոհունդի՝ 15-25, մասրենու՝ 10-20 եւ կանճրակ ներկատուի՝ 5-10 մանրացված չոր հումքը, ինչպես նաեւ Կոչիի ուրցի (Thymus kotschyanus)՝ 10-20 եւ լորենու (Tilia L.)՝ 10-20 ծաղիկներ:

Ընդլայնվում է առողջարար թեյերի տեսականին:

(51) 7 A24D 1/04 (11) 1562 (13) A2
(21) P20040093 (22) 29.07.2004
(42) 12.10.2004
(71) Սիմոն Պողոսյան (AM)
(72) Սիմոն Պողոսյան (AM)
(73) Սիմոն Պողոսյան (AM)
(54) Ծխելու պատրաստվածքների զտիչ եւ ծխելու պատրաստվածք
(57) Գյուտը վերաբերում է ծխախոտային արդյունաբերությանը եւ կարող է կիրառվել

ծխափող ունեցող ծխելու պատրաստվածքների արտադրությունում:

Զտիչը կազմված է գլանաձեւ զտող տարրից եւ դրա հետ ծայրակցված, նույն արտաքին տրամագիծն ունեցող խողովակաձեւ ծխափողից, որը պատրաստված է թելքավոր նյութից: Խողովակաձեւ ծխափողի եւ զտող տարրի ընդհանուր երկարությունը փոքր է պապիրոսային չափից:

Ծխելու պատրաստվածքը կազմված է ծխախոտաթղթից պատրաստված առանձին շապիկի մեջ ամփոփված ծխախոտի ձողից, դրա հետ ծայրակցված գլանաձեւ զտող տարրից եւ խողովակաձեւ ծխափողից, որոնց արտաքին տրամագծերը հավասար են: Խողովակաձեւ ծխափողի եւ զտող տարրի ընդհանուր երկարությունը չի գերազանցում ծխախոտի ձողի երկարությունը:

Խողովակաձեւ ծխափողը կարող է պատրաստվել մամլված թելքավոր նյութից:

Նվազեցվում է զտիչի եւ ծխելու պատրաստվածքի ինքնարժեքը, 2 անկախ կետ, 2 նկ.:

(74) Ա. Պետրոսյան

(51) 7 A61F 5/14 (11) 1563 (13) A2
(21) P20040084 (22) 07.07.2004
(42) 13.09.2004
(71) Կարեն Քոլոյան (AM), Վահե Յավրյան (AM), Արա Թեքոյան (AM)
(72) Կարեն Քոլոյան (AM), Վահե Յավրյան (AM), Արա Թեքոյան (AM)
(73) Կարեն Քոլոյան, Երեւան, Վաղարշյան 24/3, բն. 3 (AM), Վահե Յավրյան, Երեւան, Աճառյան 18, բն. 31 (AM), Արա Թեքոյան, Երեւան, Կոմիտասի 44, բն. 15 (AM)
(54) Երեխաների բնածին ծռաթաթության պահպանողական բուժման եղանակ
(57) Եղանակն իրականացվում է ծնկահոդում ծալվող KAFO-օրթեզի (knee ankle foot orthosis) միջոցով, որը պատրաստում են կոպոլիմերից, ծնկահոդի 90° ծալման դիրքում: Օրթեզը հագնում են ոտնաթաթից մինչեւ ազդրի վերին մեկ երրորդը, ծալելով ծնկահոդը, ամրացնում են

կաշուկների օգնությամբ: Օրթեզի առաջամասը փակ է, որը թույլ է տալիս ծնկահոդում կատարել շարժումներ 10° - 15° -ի սահմաններում, ինչը բացառում է ծնկահոդում կռկանքի առաջացումը: Երեխայի 10-12 ամսական հասակում օրթեզը փոխարինվում է AFO-օրթեզով (ankle foot orthosis):

Ապահովվում է ախտադարձությունների նվազեցում, 4 նկար:

(51) 7 A61K 31/00 (11) 1564 (13) A2
A61K 35/00
A61K 35/50
A61L 27/54
A61P 17/02
(21) P20040092 (22) 27.07.2004
(42) 12.10.2004
(71) «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ (AM)
(72) Համլետ Թամազյան (AM), Նինել Գուսակովա (AM), Միխայիլ Պետրոսյան (AM), Ալֆրեդ Մկրտչյան (AM), Վարդան Ոսկանյան (AM), Տիգրան Սուլթանյան (AM)
(73) «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ, Երևան, Հասարթյան 9 (AM)
(54) Տրոֆիկ խոցերի եւ տեւականորեն չառողջացող վերքերի բուժման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ տեւականորեն չառողջացող վերքերի դեղային կենսակազմությամբ եւ քիմիական միացություններով կոմպոզիտով բուժմանը:

Բուժումն իրականացնում են դեղային կենսակազմության տեղային կիրառմամբ: Որպես դեղամիջոց օգտագործում են դեղագործական բաղադրանյութ, որը ներառում է ակտիվ եւ օժանդակ բաղադրիչներ՝ 2:1 հարաբերությամբ: Ակտիվ բաղադրիչը պարունակում է հավասար քանակներով մարդու ինքնաբերաբար վիժված պտղի մաշկի ու պորտալարի եւ հավի էմբրիոների հոմոգենատների հանուկներ ֆիզիոլոգիական լուծույթում: Օժանդակ բաղադրիչը պարունակում է հավասար քանակներով հալվելի ու

կալանիտեի սպիրտային հանուկներ, ցինկ-ինսուլին, տոկոֆերոլ, ռետինոլ, 2%-ոց կոլար-գոլի լուծույթ եւ բակտերոբանի քսուբային կախուկ: Դեղագործական բաղադրանյութով տեղային մշակումը կատարում են ոռոգման եւ ապիկացիայի ձեւով 10-20 օրվա ընթացքում, օրական 1 անգամ:

Կրճատվում է բուժման տեւողությունը, պարզեցվում է բուժման եղանակը:

(51) 7 A61N 5/067 (11) 1565 (13) A2
(21) P20040099 (22) 05.08.2004
(31) P20040075 (32) 21.06.2004 (33) AM
(42) 12.10.2004
(71) Նունե Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան (AM), Միհրան Շահբազյան (AM), Միքայել Թունյան (AM)
(72) Նունե Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան (AM), Միհրան Շահբազյան (AM), Միքայել Թունյան (AM)
(73) Նունե Աբրահամյան, Երևան, Ա. Խաչատրյան 12, բն. 63 (AM), Արթուր Պապիկյան, Երևան, Հր. Քոչարի 24, բն. 29 (AM), Միհրան Շահբազյան, Երևան, Ազատության պող. 10, բն. 35 (AM), Միքայել Թունյան, Երևան, Մուղդավական 90, բն. 9 (AM)
(54) Բազմաֆունկցիոնալ բժշկական լազերային սարք
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը (ստոմատոլոգիային), մասնավորապես՝ ատամնաստվածքների հեռացման հետ միաժամանակ լազերային ճառագայթահարման եւ դեղամիջոցների ներմուծման սարքերին:
Սարքն ունի սնուցման ու լազերային ճառագայթման աղբյուր պարունակող կառավարման բլոկ եւ աշխատանքային մակերեւույթ ունեցող համալիր ազդեցության գործիք: Համալիր ազդեցության գործիքն ունի դեղամիջոցի ռեզերվուար, վիբրատոր, վիբրատորին ամրակցված ու անցուղի ունեցող ծայրակալ, պոմպ եւ լազերային ճառագայթման աղբյուրից արտածման լուսատար: Լազերային

ճառագայթման աղբյուրը կիսահաղորչային արսենիդ-գալիումային լազեր է: Պոմպը ամրակցված է դեղամիջոցի ռեզերվուարին, որը ճկուն խողովակով հաղորդակցվում է վիբրատորի ծայրակալի հետ, իսկ արտածման լուսատարն ունի ելք դեպի համալիր ազդեցության գործիքի աշխատանքային մակերեսույթը:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, 3 նկ.:

(51) 7 A61N 5/067 (11) 1566 (13) A2
(21) P20040075 (22) 21.06.2004
(42) 13.09.2004
(71) Նուրն Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան (AM), Միհրան Շահբազյան (AM), Միքայել Թունյան (AM)
(72) Նուրն Աբրահամյան (AM), Արթուր Պապիկյան (AM), Միհրան Շահբազյան (AM), Միքայել Թունյան (AM)
(73) Նուրն Աբրահամյան, Երեւան, Ա. Խաչատրյան 12, բն. 63 (AM), Արթուր Պապիկյան, Երեւան, Զ. Քոչարի 24, բն. 29 (AM), Միհրան Շահբազյան, Երեւան, Ազատության պող. 10, բն. 35 (AM), Միքայել Թունյան, Երեւան, Մոլդովական 90, բն. 9 (AM)
(54) Պարօդոնտի հիվանդությունների բուժման եղանակ
(57) Ատամների մակերեսույթից ատամնանոսավածքների հեռացման հետ միաժամանակ կատարում են դեղամիջոցի ներմուծում եւ լազերային ճառագայթահարում կիսահաղորչային արսենիդ-գալիումային լազերի միջոցով: Լազերի ալիքի երկարությունը՝ 0.8-1 մկմ, իմպուլսների հաճախությունը՝ 0.05-2000 Հց, լազերի ճառագայթման հզորությունը՝ 0.15-3 Վտ, իսկ լազերի ճառագայթահարման տեւողությունը 100 վայրկյան է:

Բարձրանում է բուժման արդյունավետությունը:

(51) 7 A63D 15/00 (11) 1567 (13) A2
A63D 13/00
(21) P20040070 (22) 07.06.2004
(42) 11.08.2004
(71) Արա Պատվականյան (AM)
(72) Արա Պատվականյան (AM)
(73) Արա Պատվականյան, Երեւան, Բագրատունյաց 8, բն. 8 (AM)
(54) Բիլյարդի մարզասարք
(57) Գյուտը վերաբերում է մարզական սարքերին, մասնավորապես՝ ուսուցման մարզասարքերին եւ կարող է օգտագործվել բիլյարդ խաղացողների հարվածի ուժը չափելու համար:
Բիլյարդի սեղանի կարճ կողմի երկարությամբ զուլակի վրա տեղադրված են 21 թիրախներ: Յուրաքանչյուր թիրախն ունի հարվածի ուժի տվիչ եւ դրան հպվող զսպանակած դռնակ: Բոլոր թիրախների տվիչները միացված են հարվածի ուժը գրանցող ցուցչային բլոկին:
Որոշվում է բիլյարդ խաղացողների հարվածի ուժը, 2 նկ.:

(51) 7 B02C 18/26 (11) 1568 (13) A2
B02C 18/22
(21) P20040058 (22) 30.04.2004
(42) 11.08.2004
(71) Հակոբ Բարսեղյան (AM), Գեւորգ Հակոբյան (AM)
(72) Հակոբ Բարսեղյան (AM), Գեւորգ Հակոբյան (AM)
(73) Հակոբ Բարսեղյան, Գյումրի, Արագած 6-րդ թաղամաս 2, բն. 11 (AM), Գեւորգ Հակոբյան, Գյումրի, Մերկուրովի 2բ (AM)
(54) Մսահատիչ
(57) Գյուտը վերաբերում է սննդարդյունաբերությանը, մասնավորապես՝ երշիկեղենի արտադրությունում օգտագործվող մսահատիչներին:
Մսահատիչն ունի իրան, դանդաղընթաց պտտվող գլանաձեւ թաս, բարձակային կառուցվածքով արագընթաց դանակային լիսեռ իր մանգաղաձեւ դանակներով, հունքի

բեռնավորման եւ պատրաստի հոմոգեն զանգվածի բեռնաթափման, դարձափոխային ռեժիմով աշխատող պտուտակային փոխակրիչ: Դանակային լիսեռի եւ պտուտակային փոխակրիչի պտտման առանցքները ուղղաձիգ հարթության մեջ զուգահեռ են թասի պտտման առանցքին եւ շեղված են թասի առանցքից թասի շառավղի կեսի չափով, իսկ դանակային լիսեռին իր պտտման առանցքով հաղորդվում է նաեւ տատանողական շարժում:

Պարզեցվում է մեքենայի կառուցվածքը, բարձրացվում է պատրաստի հոմոգեն զանգվածի որակը, 3 նկ.:

(51) 7 B08B 3/12 (11) 1569 (13) A2
A61K 41/00

(21) P20040036 (22) 16.03.2004

(42) 11.06.2004

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արամ Բալասանյան (AM), Էռնեստ Քրիստաֆորյան (AM), Ստեփան Խրիստափորյան (AM), Բորիս Բալասանյան (AM), Խաչատուր Հակոբյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Անդրաձայնային ճառագայթիչ

(57) ճառագայթիչն ունի անդրաձայնային կերպափոխիչ եւ մեմբրանային տրանսֆորմատոր: Մեմբրանային տրանսֆորմատորի վրա ամրակցված է հարթ թիակներով սռնի, իսկ թիակների ազատ վերջնամասում տեղակայված են կենտրոնացված զանգվածներ: Թիակների սեփական տատանումների հաճախությունները հաշվարկված են ըստ համապատասխան բանաձևի: Կերպափոխիչի միացման ժամանակ հեղուկ միջավայրում մեմբրանային տրանսֆորմատորից ստեղծվում է անդրաձայնային տատանումների դաշտ, որը

նպաստում է հեղուկում ընթացող գործընթացի ինտենսիվացմանը:

Ապահովվում է կոնստրուկցիայի պարզեցում եւ արտադրողականության բարձրացում, 1 նկ.:

(51) 7 B08B 3/12 (11) 1570 (13) A2

B06B 3/00

B06B 3/02

(21) P20040027

(22) 23.02.2004

(42) 11.05.2004

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արամ Բալասանյան (AM), Էռնեստ Քրիստաֆորյան (AM), Ստեփան Խրիստափորյան (AM), Բորիս Բալասանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Ուղղանկյուն մեմբրաններում անդրաձայնային տատանումների գրգռման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անդրաձայնային տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ ուղղանկյուն մեմբրաններում անդրաձայնային տատանումների գրգռման եղանակներին եւ կարող է կիրառվել բազմաթեւանի լարակորգանման, լվացման, հաբերի մամլման, էմուլսացման, դիսպերսման եւ այլ գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու համար:

Ուղղանկյուն մեմբրաններում անդրաձայնային տատանումների գրգռման համար անդրաձայնային տատանումների տրանսֆորմատորները դասավորում են երկու գծային շարքով, որոնցից առաջինը՝ զուգահեռ մեմբրանի հիմքին: Այդ շարքի տրանսֆորմատորներն ամրակցում են մեմբրանի ճակատին ու փաթույթները միացնում անդրաձայնային գեներատորի մուտքին: Գյուտի համաձայն անդրաձայնային տատանումների տրանսֆորմատորների երկրորդ շարքը տեղակայում են առաջինի նկատմամբ ուղղահայաց: Շարքերում անդրաձայնային

տատանումների տրանսֆորմատորների միջեւ միջառանցքային հեռավորություններն ընդունում են անդրաձայնային տատանումների ալիքի երկարության կեսին հավասար: Երկու շարքերի առաջին տրանսֆորմատորները միացնում են մույն փուլով, իսկ յուրաքանչյուր շարքի հարեւան տրանսֆորմատորները՝ 180 աստիճան շեղված փուլով: Ապահովվում է ուղղանկյուն մեմբրանների լոկալ կետերում անդրաձայնային տատանումների ինտենսիվության բարձրացումը, 1 նկ.:

(51) 7 B22F 3/00 (11) 1571 (13) A2
B22F 3/20
(21) P20040056 (22) 28.04.2004
(42) 12.07.2004
(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)
(72) Գրիգոր Թումանյան (AM), Հասմիկ Պետրոսյան (AM)
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) Մետաղափոշուց երկարաչափ մետաղյա առարկաների պատրաստման եղանակ
(57) Մետաղափոշուց երկարաչափ մետաղյա առարկաների պատրաստման եղանակում, ըստ որի կատարում են հիդրավլիկ մամլիչների միջոցով մետաղափոշու երկկողմանի սառը մամլում, այնուհետեւ ստացված նախապատրաստվածքի տաք արտամղում, մինչեւ մետաղափոշու երկկողմանի սառը մամլումը հաշվարկում են սկզբնական ծակոտկենությունը, որից հետո մինչեւ տաք արտամղումը՝ տեղադրելով առարկայի պահանջվող պարամետրերի արժեքները, ըստ համապատասխան բանաձեւի հաշվարկում են տաք արտամղման հիմնական պարամետրերը՝ արտամղման ուժը, արտամղման գործակիցը եւ մամլամայրի թեքման անկյունը:

Պարզեցվում է մետաղյա առարկաների պատրաստման եղանակը, բարձրացվում են դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունները, 1 նկ.:

(51) 7 B60B 15/00 (11) 1572 (13) A2
(21) P20040106 (22) 23.08.2004
(42) 12.10.2004
(71) Աշոտ Տոնոյան (AM)
(72) Գեւորգ Պապյան (AM), Աշոտ Տոնոյան (AM), Աշոտ Շաքարյան (AM)
(73) Աշոտ Տոնոյան, Երեւան, Կոմիտասի 7/1, բն. 7 (AM)
(54) Անվավոր փոխադրամիջոցի անցունակության բարձրացման սարք
(57) Գյուղը վերաբերում է ավտոմեքենաշինությանը, մասնավորապես՝ անվավոր փոխադրամիջոցների անցունակության բարձրացմանը նպաստող անվային վրադիր սարքերին:
Սարքն ունի փոխադրամիջոցի տանող կիսալիսեռի կունդին համառանցք միակցված շառավղորեն ուղղորդված և հավասար հեռավորությունների վրա տեղադրված հակասահքային թիակներ և գետնակառչակներ ունեցող կրող սկավառակ ու հակասահքային թիակների դիրքը անվադողերի վազբուղու շրջագծի նկատմամբ կարգավորող սկավառակ: Հակասահքային թիակներն ունեն ոչ կլոր հատվածքի հատվածամաս, կոթուն եւ կոթունի վրա տեղակայված պարուրածեւ սեղմման զսպանակ եւ տեղադրված են կրող սկավառակի հետ միաձույլ իրականացված և հակասահքային թիակների ոչ կլոր հատվածքի ձևը ունեցող շառավղային ուղղության ուղղորդիչների մեջ: Կրող սկավառակի մակերեւույթի նկատմամբ ուղղորդիչներն ելուստվող են դեպի դուրս եւ իրականացված են որպես անվային թիակներ, իսկ հակասահքային թիակները իրենց կոթունների վրա իրականացված ցցերի օգնությամբ կցորդված են կարգավորող սկավառակի հետ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, մեծացվում է շահագործման հուսալիությունը, 5 նկ:

(51) 7 B63G 53/04 (11) 1573 (13) A2
(21) P20040049 (22) 14.04.2004
(42) 12.07.2004
(71) Ալեքսանդր Նիկողոսյան (AM)
(72) Ալեքսանդր Նիկողոսյան (AM)
(73) Ալեքսանդր Նիկողոսյան, Երեւան, Տպագրիչ-ների 9, բն. 12 (AM)
(54) Սորուն նյութերի պնեմատիկ տեղափոխման սարք
(57) Գյուտը վերաբերում է սարքերին, որոնք նախատեսված են սորուն նյութերի հավաքման եւ դոզավորված տեղափոխման համար:

Սարքն ունի վերին եւ ստորին մասերից կազմված իրան: Իրանի վերին մասը սնամեջ կոն է, որի կոնության անկյունը հավասար է սորուն նյութի լիրաքմբի բնական թեքության անկյանը: Իրանի ստորին մասը կիսագունդ է, որը կցորդված է սնամեջ կոնի հետ: Կոնի գագաթում կա նյութի ընդունման եւ արտաթողման կարճախողովակ, որի մեջ տեղադրված են մանեկի միջոցով սեւեռվող հանովի ականոց եւ հերձատիչ: Կոնի կողային մակերեսներին կա նրա հիմքին ուղղահայաց խողովակապտուկ՝ կրողի մատուցման համար: Կարճախողովակի միջոցով նյութը բեռնավորում են իրանի ստորին մասում՝ կիսագնդում (սնիչ-բունկերում), որից հետո կարճախողովակի մեջ մտցվում են ականոցը եւ հերձատիչը: Խողովակապտուկի միջոցով մատուցվում է կրողը, օրինակ, ճնշման տակ սեղմված օդ: Կիսագնդում ստեղծվում է գազ-նյութ խառնուրդը, որը կարճախողովակի միջոցով մատուցվում է նրա հետ միակցված պնեմակաբեղին:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, ապահովվում է նյութի անհրաժեշտ դիսպերսայնությունը, 1 նկ.:

(51) 7 B64C 11/16 (11) 1574 (13) A2
(21) P20040077 (22) 25.06.2004
(42) 13.09.2004
(71) «Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM), «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Գայանե Շահազիզյան (AM), Արման Շահազիզյան (AM), Հրաչյա Շահազիզյան (AM)
(73) «Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Սեւանի 114 (AM), «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) Օդային պտուտակ
(57) Պտուտակն ունի երկու թել: Թելերից յուրաքանչյուրն ունի համապատասխան քայլ, որոնց բաշխումը ասիմետրիկ է: Մեկ թելն ունի հաստատուն քայլ, իսկ մյուսը՝ փոփոխական քայլ, որը որոշվում է համապատասխան բանաձեւով: Թելերի քայլերի եւ քարշի ուժերի տարբերությունից առաջացող թրթռումների նվազեցման համար կատարվում է պտուտակի դինամիկ հավասարակշռում:

Ապահովվում է օ.գ.գ.-ի բարձրացում, 2 նկ.:

(51) 7 C01B 33/24 (11) 1575 (13) A2
(21) P20040031 (22) 04.03.2004
(42) 11.06.2004
(71) Գագիկ Գրիգորյան (AM), Գալինա Հարությունյան (AM), Կարեն Գրիգորյան (AM), Ժաննա Աբրահամյան (AM), Աննա Խաչատրյան (AM)
(72) Գագիկ Գրիգորյան (AM), Գալինա Հարությունյան (AM), Կարեն Գրիգորյան (AM), Ժաննա Աբրահամյան (AM), Աննա Խաչատրյան (AM)
(73) Գագիկ Գրիգորյան, Երեւան, Կոմիտասի 25, բն. 43 (AM), Գալինա Հարությունյան, Երեւան,

Գրիբոյեդովի 5, բն. 33 (AM), Կարեն Գրիգորյան, Երեւան, Կոմիտասի 25, բն. 43 (AM), Ժաննա Աբրահամյան, Երեւան, Զր. Քոչարի 17, բն. 4 (AM), Աննա Խաչատրյան, Երեւան, Մանանդյան 1, բն. 3 (AM)

(54) Վոլաստոնիտի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ վոլաստոնիտի սինթեզին, որը կիրառվում է կերամիկայի, ձայնամեկուսիչ սալիկների, պլաստիկների եւ ներկերի արտադրության մեջ:

Հիդրոջերմային պայմաններում սիլիցիում պարունակող ելանյութից եւ կալցիումի հիդրօքսիդից հանքայնարարի առկայությամբ 150°C ջերմաստիճանում, 2-4 ժամվա ընթացքում սինթեզում են կալցիումի հիդրոմիասիլիկատ, որն այնուհետեւ թրծում են: Որպես հանքայնարար օգտագործում են 1,5-2,0 զանգվ. % քանակությամբ կալիումի հիդրօքսիդ, իսկ որպես սիլիցիում պարունակող ելանյութ՝ զամմա-տրիդիմիտի, բետա-կրիստոբալիտի եւ բետա-քվարցի խառնուրդը՝ (40-50):(30-40):(10-20) զանգվածային հարաբերակցությամբ:

Պարզեցվում է եղանակը եւ բարձրանում արգասիքի մաքրությունը:

(57) Գյուտը վերաբերում է սերպենտինիտների կոմպլեքսային մշակման եղանակներին եւ կարող է կիրառվել լուծելի սիլիկաթթվի, երկաթի (III) եւ մագնեզիումի օքսիդների, ինչպես նաեւ նուրբ մանրացվածությամբ սիլիկափոշու արտադրության մեջ:

Սերպենտինիտը շիկացնում են 640-680°C ջերմաստիճանում, ապա մշակում 5,0-8,0%-անոց աղաթթվով 3-5 րոպեի ընթացքում, սերպենտինիտ:աղաթթու=1:(11-20) զանգվածային հարաբերակցությամբ, որից հետո տաք ապարախյուտը դեկանտում են եւ քամում: Սիլիկաթթու, մագնեզիումի եւ երկաթի (III) քլորիդներ պարունակող քամուկը գոլորշիացնում են 90°C ջերմաստիճանում եւ առանձնացնում սիլիկաթթուն զուլ-ժել ձեւով, իսկ քլորիդների լուծույթը չեզոքացնում են կրաջրով եւ առանձնացնում երկաթի (III) հիդրօքսիդը pH 7,0-7,5 արժեքներում, ապա մագնեզիումի հիդրօքսիդը՝ pH 8,0-10,0 արժեքներում: Երկաթի (III) եւ մագնեզիումի հիդրօքսիդները ջրազրկում են 350°C ջերմաստիճանում՝ ստանալով դրանց օքսիդները: Դեկանտումից հետո առաջացած նստվածքը չորացնում են՝ ստանալով նուրբ մանրացվածությամբ սիլիկափոշի:

Ապահովվում է էկոլոգիապես մաքուր, անթափոն տեխնոլոգիա:

(51) 7 C01F 5/02 (11) 1576 (13) A2
C01B 33/142

(21) P20040057 (22) 29.04.2004

(42) 12.07.2004

(71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)

(72) Նշան Զուլունյան (AM), Էմմա Հովհաննիսյան (AM), Թամարա Հովսեփյան (AM), Աիդա Ղազանջյան (AM), Զարուհի Հովհաննիսյան (AM), Սոնա Ղազարյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առետրային կազմակերպություն, Երեւան, Արդյունաբերական փող. 2-րդ նրբ. 10 (AM)

(54) Սերպենտինիտների կոմպլեքսային մշակման եղանակ

(51) 7 C01F 5/02 (11) 1577 (13) A2
C22B 3/00

C22B 26/22

(21) P20040044 (22) 05.04.2004

(42) 12.07.2004

(71) Հովհաննես Հովհաննիսյան (RU)

(72) Հովհաննես Հովհաննիսյան (RU), Ստեփան Աբովյան (AM), Գագիկ Քարամյան (AM)

(73) Հովհաննես Հովհաննիսյան (RU)

(54) Գերհիմնային եւ գերհիմնայինից դեպի հիմնայինը անցումային հանդիսացող ապարներից մետաղների եւ դրանց միացությունների անթափոն արտադատման եղանակ

(57) Ապարակազմիչ հանքանյութի սիլիկատային մասը՝ օլիվինը եւ դրա մետամորֆային տարա-

տեսակները փշրում են եւ մանրացում մինչեւ մասնիկների 1մմ չափերը, շիկացնում են մինչեւ 1000°C ջերմաստիճան 5 րոպեից մինչեւ 2 ժամ ընթացքում, ապա լուծում աղաթթվում: Խառնուրդից նստեցման եղանակով բաժանում են լուծված հեղուկ եւ չլուծված պինդ ֆազերը, լուծված ֆազից անջատում են մագնեզիումի քլորիդը եւ մյուս աղերը՝ քիմիական նստեցման կամ էլեկտրաթաղանթային զատման եւ մաքրման եղանակով: Աղերը այնուհետեւ փոխակերպում են համապատասխան օքսիդների եւ հիդրօքսիդների, որոնք վերականգնում են մետաղների ջրածնային կամ կաթոդային եղանակներով եւ, կախված մետաղի բնույթից եւ ստացման անհրաժեշտ մաքրությունից, բարձրաջերմաստիճանային մետաղագործական պրոցեսների վակուումային էլեկտրոնաճառագայթային վերականգնման եւ ձուլման եղանակներով: Ապարի չլուծված մասը ենթարկում են քիմիական, գրավիտացիոն կամ էլեկտրամագնիսական զատման:

Ապահովվում է արժեքավոր նյութերի համակողմանի արտազատումը էկոլոգիապես մաքուր եղանակով:

(74) Ա. Պետրոսյան

-
- (51) 7 C02F 3/28 (11) 1578 (13) A2
 (21) P20040040 (22) 22.03.2004
 (42) 12.07.2004
 (71) Հրաչյա Քարամյան (AM), Էրնեստ Ղազարյան (AM)
 (72) Հրաչյա Քարամյան (AM), Էրնեստ Ղազարյան (AM)
 (73) Հրաչյա Քարամյան, Երեւան, Իսահակյան 14, բն. 3 (AM), Էրնեստ Ղազարյան, Երեւան, Տպագրիչների 5, բն. 19 (AM)
 (54) Օրգանական թափոնների անաերոբային խմորման կայանք
 (57) Խմորման կայանքն ունի գլանային պատյան, դրա մեջ տեղակայված պարուրային փոխակրիչ, որը միացված է դարձափոխային շարժիչի: Պարուրային փոխակրիչի յուրաքանչյուր գալարի վրա կա առնվազն երկու միջանցիկ անցք,

որոնց առանցքները զուգահեռ են պարուրային փոխակրիչի պտտման առանցքին: Օրգանական թափոնի զանգվածը պարուրային փոխակրիչի միջոցով տեղափոխվում է դեպի պատյանի ճակատային մաս, որտեղից պարույրների անցքերի միջով տեղափոխվում է հակառակ ուղղությամբ:

Բարձրանում է զանգվածի խառնման եւ խմորման ինտենսիվությունը, 2 նկար:

-
- (51) 7 C04F 11/04 (11) 1579 (13) A2
 C02F 3/28
 C12M 1/12
 (21) P20040069 (22) 04.06.2004
 (42) 12.07.2004
 (71) Հենրիկ Ղուկասյան (AM), Համազասպ Ղուկասյան (AM)
 (72) Հենրիկ Ղուկասյան (AM), Համազասպ Ղուկասյան (AM), Էդմոն Մանուկյան (AM)
 (73) Հենրիկ Ղուկասյան, Երեւան, Վահր. Փափագյան 21, բն.61 (AM), Համազասպ Ղուկասյան, Երեւան, Մառի փող., նրբ. 8, բն. 8 (AM)
 (54) Օրգանական թափոնների վերամշակման կայանք
 (57) Գյուտը վերաբերում է օրգանական թափոնների անաերոբ խմորման կայանքներին եւ կարող է օգտագործվել գյուղատնտեսական, սննդարդյունաբերական, ինչպես նաեւ կենցաղային թափոնների կենսաքիմիական մշակմամբ կենսազազ եւ բնապահպանորեն մաքուր պարարտանյութ ստանալու համար:
 Կայանքն ունի հորիզոնական հոսքագծով գլանաձեւ ուղղաձիգ անաերոբ խմորման ռեակտոր, որը պարունակում է թթվեցված հումքը ռեակտորի կենտրոն գերմուծող խողովակ, հոսքագծի վերջում տեղակայված արտահոսքի եւ դատարկման խողովակներ, հոսքագծի ընթացքն ուղղորդող պարուրագծային միջնորմ, գազահեռացման խողովակ, հոսքագծի ստորին մասում տեղակայված գազապղպջակավորման խողովակներ, ջերմաչափման, ջերմակարգավորման եւ հակապայթյունային սարքեր: Ռեակտորի արտաքին պատը պարփակվում է աերոբ թթվեցման խուցը, որի ստորին մասում

տեղակայված է օդապղպաջակավորման խողովակաշար եւ ռեակտորի ստորին մասում տեղակայված հունքի տաքացման խողովակաշար: Նվազում են կայանքի ջերմային կորուստները, եւ ապահովվում է աշխատանքի արդյունավետության բարձրացումը, 2 նկ.:

-
- (51) 7 C09D 195/00 (11) 1580 (13) A2
C09D 5/12
- (21) P20040073 (22) 14.06.2004
(42) 13.09.2004
- (71) «Նաիրիտ» - 2 փակ բաժնետիրական ընկերություն (AM)
- (72) Մարատ Յովսեփյան (AM), Ալբերտ Գեորգյան (AM), Ալբերտ Սուքիասյան (AM), Ռուբեն Սաղաթեյան (AM), Մարտին Սահակյան (AM), Լիդա Չարությունյան (AM), Նինա Գեորգյան (AM), Գայանե Մխիթարյան, Առլեն Յովսեփյան (AM)
- (73) «Նաիրիտ» - 2 փակ բաժնետիրական ընկերություն, Երեւան, Բագրատունյաց 70 (AM)
- (54) Հակակոռոզիական եւ ջրամեկուսիչ բաղադրանյութ
- (57) Հայտարկված է հակակոռոզիական եւ ջրամեկուսիչ բաղադրանյութ, որը ներառում է հետեւյալ բաղադրամասերը՝ զանգվածային %.
- լաթ էթիլոլ՝ 40.0-55.0, պոլիքլորապրենային կաուչուկ՝ 5.0-6.0, ԵՄ IV-V մակնիշի բիտում՝ 10.0-20.0, ռետինային փշրանք՝ 4.0-7.5, ստեարինաթթու՝ 1.0-1.5, պլաստիկարար՝ 4.0-6.0 եւ անօրգանական փոշենման լցանյութ՝ 10.0-30.0, ընդ որում կաուչուկը ԺՊ կամ ԺՇՊ մակնիշի «Նաիրիտ» է, իսկ պլաստիկարարը՝ երկբուտիլֆտալատ, երկբուտիլսեբացինատ կամ քլորպարաֆին:

Բաղադրանյութը քիմիապես կայուն է, ունի բարձր ֆիզիկամեխանիկական հատկություններ՝ էլաստիկություն, հարակցում, ջերմակայունություն, ջրակլանում եւ կարող է կիրառվել սարքավորումների եւ շինարարական կառուցվածքների հակակոռոզիական պաշտպա-

նության, ինչպես նաեւ ջրատեխնիկական կառույցների ջրամեկուսացման համար:

-
- (51) 7 C12G 3/04 (11) 1581 (13) A2
C12G 3/06
- (21) P20040071 (22) 08.06.2004
(42) 11.08.2004
- (71) Աբրիկ Պետրոսյան (AM)
- (72) Աբրիկ Պետրոսյան (AM)
- (73) Աբրիկ Պետրոսյան, Երեւան, Ա. Խաչատրյան 24, բն. 78 (AM)
- (54) Լիկյոր
- (57) Հայտարկվում է լիկյոր, որը է ներառում է նռան հյութ՝ 55-65 կգ/100լ, ֆրուկտոզ՝ 8-12 կգ/100լ, գլյուկոզ՝ 8-12 կգ/100լ, 12%-ոց էթիլային սպիրտ՝ մնացածը:
- Ապահովվում է տեսականու ընդլայնումը եւ ընդլայնվող զգայարանական հատկությունների բարձրացումը:

-
- (51) 7 C12H 1/22 (11) 1582 (13) A2
- (21) P20040082 (22) 06.07.2004
(42) 13.09.2004
- (71) ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոն պետական ոչ առետրային կազմակերպություն (AM)
- (72) Ռաֆիկ Բալասանյան (AM), Ավետիք Կիրակոսյան (AM), Էդվարդ Չարությունյան (AM), Ռաֆայել Ղազարյան (AM), Գարուշ Սամվելյան (AM)
- (73) ՀՀ ԳԱԱ «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոն պետական ոչ առետրային կազմակերպություն, Աշտարակ 2, Գիտական 2 (AM)
- (54) Հնացրած ալկոհոլային խմիչքի պատրաստման եղանակ
- (57) Մրգատու կամ պտղատու ծառերի փայտանյութերից ստացված բնական լուծանջուքին ավելացնում են նույն մրգերից կամ հատապտուղ-

ներից թորված սպիրտը եւ դնում են հասունացման մեկից ութ ամիս ժամկետով:

Կրճատվում է հնացրած խմիչքների պատրաստման ժամկետը:

(51) 7 C30B 13/16 (11) 1583 (13) A2
C30B 16/18
(21) P20040079 (22) 25.06.2004
(42) 13.09.2004
(71) Ռոստոմ Կուրդինյան (RU)
(72) Խաչիկ Բաղդասարով (RU), Ռոստոմ Կուրդինյան (RU), Լեւոն Յովհաննիսյան (AM)
(73) Ռոստոմ Կուրդինյան (RU)
(54) Հալույթից դժվարահալ միաբյուրեղների աճեցման սարք եւ եղանակ
(57) Սարքն ունի բյուրեղացման խցիկ, ելանյութով բեռնարկղ, տեղափոխման մեխանիզմ, տաքացիչ, ջերմային էկրան: Ջերմային էկրանը եւ տաքացիչը պատրաստված են ամրանավորված գրաֆիտից, իսկ ելանյութով բեռնարկղի եւ տաքացիչի միջեւ տեղադրված է վոլֆրամային ցանց: Ելանյութով բեռնարկղ, տաքացիչ եւ ջերմային էկրան պարունակող համակարգում միջեւ ստեղծում են 100Վ լարվածությամբ հաստատուն էլեկտրական դաշտ:

Ստացվում են մինչեւ 30կգ զանգված ունեցող միաբյուրեղներ, 3 նկ. :

(74) Է. Նահապետյան

(51) 7 C30B 13/16 (11) 1584 (13) A2
C30B 13/18
(21) P20040078 (22) 25.06.2004
(42) 13.09.2004
(71) Ռոստոմ Կուրդինյան (RU)
(72) Խաչիկ Բաղդասարով (RU), Ռոստոմ Կուրդինյան (RU), Լեւոն Յովհաննիսյան (AM)
(73) Ռոստոմ Կուրդինյան (RU)
(54) Հալույթից դժվարահալ միաբյուրեղների աճեցման սարք

(57) Սարքն ունի բյուրեղացման խցիկ, ելանյութով բեռնարկղ, տեղափոխման մեխանիզմ, տաքացիչ, ջերմային էկրանների համակարգ: Տաքացիչը կազմված է երկու վերելի եւ ներքելի մասերից, իսկ ջերմային էկրանների համակարգն ունի մեկ վոլֆրամային, երեք մոլիբդենային եւ մեկ ամրանավորված գրաֆիտե էկրաններ:

Աճեցվում են մինչեւ 4,5կգ զանգված ունեցող միաբյուրեղներ, նվազեցվում են ջերմային կորուստները եւ էլեկտրական էներգիայի սպառումը, 4 նկ.:

(74) Է. Նահապետյան

(51) 7 D01H 7/10 (11) 1585 (13) A2
(21) P20040043 (22) 01.04.2004
(42) 12.07.2004
(71) Աշոտ Պապոյան (AM), Վլադիմիր Պոլյակով (RU)
(72) Աշոտ Պապոյան (AM), Վլադիմիր Պոլյակով (RU)
(73) Աշոտ Պապոյան, Գյումրի, 26 Կոմիսարների 60 (AM), Վլադիմիր Պոլյակով, Սանկտ-Պետերբուրգ, Օկտյաբրսկայա նաբերեժնայա 74/2, բն. 62 (RU)

(54) Մանող կամերայի իլիկի հենարանային հանգույց

(57) Գյուտը վերաբերում է տեքստիլ մեքենաշինությանը:

Հանգույցն ունի անշարժ սնամեջ իրան, դրա մեջ առանցքակալների վրա տեղակայված միջանկյալ ռոտոր, որի մեջ առանցքակալների վրա տեղակայված է շարժաբերային ռոտոր: Հանգույցն ունի նաեւ շարժաբերային ռոտորի հետ կենտրոնավորված եւ առանցքի նկատմամբ անկյունային դարձի հնարավորությամբ սեւեռված հիմնական իլ եւ իրանի ճակատային հարթությունում տեղադրված առաձգական սկավառակներից կազմված հենարան, ընդ որում, հիմնական իլն առաձգական կցորդիչով եւ կենտրոնավորող տարրով համառոտեցված միացված է շարժաբերային ռոտորին եւ տեղադրված է առաձգական սկավառակներից կազմված հենարանում:

Բարձրանում է հանգույցի հուսալիությունը եւ հնարավորություն է ստեղծվում մեծացնելու իլիկի պատման արագությունը, 3 նկ.:

(51) 7 E02D 3/08 (11) 1586 (13) A2
(21) P20040080 (22) 29.06.2004
(42) 12.10.2004

(71) Ռուբեն Բադալյան (AM), Ռուբեն Յարությունյան (AM), Կարեն Բաբախանով (AM), Լեւոն Վասիլյան(AM)

(72) Ռուբեն Բադալյան (AM), Ռուբեն Յարությունյան (AM), Կարեն Բաբախանով (AM), Լեւոն Վասիլյան(AM)

(73) Ռուբեն Բադալյան, Երեւան, Հին Երեւանցու 47ա, բն. 47 (AM), Ռուբեն Յարությունյան, Երեւան, Նարեկացու 38, բն.54 (AM), Կարեն Բաբախանով, Երեւան, Գալշոյան 26, բն. 16 (AM), Լեւոն Վասիլյան, Երեւան, Նանսենի 3, բն. 33 (AM)

(54) Բազմահարկ շենքի կողաթեքության նվազեցման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին եւ կարող է օգտագործվել բազմահարկ շենքերի հիմնատակի ջրակայուն գրունտների գերնորմատիվային անհավասարաչափ նստվածքների պատճառով առաջացած դեֆորմացիաների կայունացման եւ կողաթեքության նվազեցման համար: Եղանակը կայանում է նրանում, որ մեծացնում են հիմքի հենման մակերեսը եւ կատարում ենթադրված ու ապահատացված գրունտների ներարկումային ամրապնդում: Հենման մակերեսը մեծացնում են երկաթբետոնե խաչաժապավենային հիմքը վերակառուցելով կողասալային: Վերջինիս ազատ վանդակներում տեղադրում են միաձույլ երկաթբետոնե լրացուցիչ հիմքային սալեր, որոնք ամբողջ պարագծով մտցնում են գոյություն ունեցող ժապավենային հիմքի ներքանի տակ, իսկ շենքի շուրջը տեղադրում են հակածանցումային պատմեշ: Հիմքային սալերի տեղադրումն եւ

դրանց տակ գտնվող գրունտների ներարկումային ամրապնդումն իրականացնում են սկսելով հիմքի առավելագույն նստվածք ունեցող վանդակներից դեպի ավելի քիչ նստվածք ունեցող վանդակները:

Եղանակը հնարավորություն է տալիս կանխել բարձրահարկ շենքերի հիմնատակի գրունտների անհավասարաչափ նստվածքները, 7 նկ.:

(51) 7 E04B 1/34 (11) 1587 (13) A2
(21) P20040064 (22) 27.05.2004
(42) 13.09.2004

(71) Մուրադ Սահակյան (AM)

(72) Մուրադ Սահակյան (AM)

(73) Մուրադ Սահակյան, Եղեգնաձոր, Միկոյան 16, բն. 18 (AM)

(54) Սահակյանի շարժունակ շինություն

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ բնակելի տների, առանձնատների, վարչական շենքերի, պահեստների եւ այլ շինությունների շինարարությանը եւ կարող է օգտագործվել հնարավոր հեղեղումների եւ սեյսմավտանգ գոտիներում: Շարժունակ շինությունը ունի հիմք, վերհիմնային մաս, կրող եւ ինքնակիր կառուցվածքներ եւ հիմքի վրա տեղակայված ուղղորդիչ փողեր, որոնք ցցված են $h + 1$ բարձրությամբ, որտեղ h -ը վարարման առավելագույն մեծությունն է: Ուղղորդիչ փողերը հենված են ճկուն բարձ - մեղմիչների վրա, որոնք ամրանավորված են բազմաջղավոր մետաղյա ճոպաններով: ճոպանների մի ծայրը ներմոնտաժված է հիմքի մեջ, իսկ մյուս ծայրը կոշտ միացված է ուղղորդիչ փողին: Վերհիմնային մասը հիմքից ինքնավար է եւ պարունակում է դրա հետ միացված սահող խողովակներ, որոնք ընդգրկում են հիմքի ուղղորդիչ փողերը եւ ունեն արգելակող համակարգ: Ինքնակիր կառուցվածքները պատրաստված են խորսխավոր միջանկյալ շերտով բազմաշերտ պանելներից:

Ապահովվում է շինության անվտանգությունը, 4նկ:

(51) 7 E04C 1/00 (11) 1588 (13) A2
E04B 2/06

(21) P20040060 (22) 21.05.2004
(42) 13.09.2004

(71) Գեւորգ Թամարյան (AM), Գրիգոր Թամարյան (AM), Գեղամ Թամարյան (AM)

(72) Գեւորգ Թամարյան (AM), Գրիգոր Թամարյան (AM), Գեղամ Թամարյան (AM)

(73) Գեւորգ Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մոլդովական 30/3, բն.17 (AM), Գրիգոր Թամարյան, Երեւան, Նոր Նորքի 2-րդ միկրոշրջան, Մոլդովական 30/3, բն. 17 (AM)

(54) Որմնաքար

(57) Որմնաքարն իրենից ներկայացնում է ուղղանկյուն զուգահեռանիստ եւ ունի ամրանների տեղադրման երկու ուղղաձիգ անցքեր, որոնցից յուրաքանչյուրը գտնվում է շինաքարի ճակատային նիստերից հավասար, իսկ կողային նիստերից՝ շինաքարի երկարության 1/4 հեռավորության վրա: Անցքերից դեպի որմնաքարի նիստերը արված են անցքերի տրամագծի չափով բացվածքներ:

Ապահովվում է ամրանավորման հուսալիությունը, 8 նկ.:

(51) 7 F02B 53/00 (11) 1589 (13) A2
(21) P20040014 (22) 27.01.2004
(42) 12.07.2004

(71) Հայկ Աստվածատրյան (AM)

(72) Հայկ Աստվածատրյան (AM)

(73) Հայկ Աստվածատրյան, Երեւան, Բաշինջաղյան 192, բն. 39 (AM)

(54) Ներքին այրման շարժիչ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչներին:

Շարժիչն ունի ստատոր և ռոտոր, իսկ վառելիքը շարժիչին մատուցվում է ինքնահոս: Ստատորը երկու կիսանների միջև ներտաշված սնամեջ տոր (իրան) է, որի մի կողմի վրա, իրար մոտ կան երկու պատուհաններ, իրենց համապատասխան ակոսատներով, որոնց մեջ ուղղաձիգ շարժվում են թիթեղային փականները,

որոնք էլ իրագործում են վառելիքի մուտքը դեպի տորի տարածք և այրված նյութերի հեռացումը՝ ցիկլերին համապատասխան: Ռոտորը կլոր, հարթ սկավառակ է՝ տեղավորված իրանի երկու կիսանների միջև, որոնց երկու շոշափման կետերում մատած են թիակները, իսկ իրանի արտաքին կողմից լիսեռի վրա տեղադրված բռնցքները թիթեղային փականներին հաղորդում են պահին համապատասխան դիրքեր:

Պարզեցվում է շարժիչի կառուցվածքը եւ պատրաստման տեխնոլոգիան, 4 նկ.:

(51) 7 F03C 1/08 (11) 1590 (13) A2
(21) P20040055 (22) 21.04.2004
(42) 11.08.2004

(71) Գեւորգ Նազարյան (AM), Սերգեյ Գրիգորյան (AM), Ռոբերտ Սահակյան (AM)

(72) Գեւորգ Նազարյան (AM), Սերգեյ Գրիգորյան (AM), Ռոբերտ Սահակյան (AM)

(73) Գեւորգ Նազարյան, Երեւան, Դրոյի 18, բն.11 (AM), Սերգեյ Գրիգորյան, Երեւան, Մաշտոցի 50, բն.15 (AM), Ռոբերտ Սահակյան, Երեւան, Տիգրան Մեծի 6, բն. 3 (AM)

(54) Մխոցային հիդրոշարժիչ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ հետադարձ-առաջընթաց գործողության բազմամխոց հիդրոշարժիչներին:

Մխոցային հիդրոշարժիչն ունի հիդրոպոմպ, աշխատանքային գլան, մխոց, բարձր եւ ցածր ճնշման խցիկներ եւ բաշխիչներ: Բաշխիչներն իրականացված են յուրաքանչյուր աշխատանքային գլանի համար երկու զույգ կիսաշրջանաձեւ պատուհաններով ատամնանիվներից, որոնք տեղակայված են մխոցի վերին ու ստորին մեռյալ կետերում եւ ունեն սահելով պտտվելու հնարավորություն բարձր եւ ցածր ճնշման խցերում, աշխատանքային գլանի արտաքին հարթ մակերեսային վրա եղած անցքերի դիմաց, ընդ որում ատամնանիվներն իրենց պտույտը ստանում են շարժիչից, որը միակցված է հիդրոպոմպի եւ ծնկաձեւ լիսեռի հետ:

Պարզեցվում է շարժիչի կառուցվածքը, 3
նկ.:

(51) 7 F03G 7/00 (11) 1591 (13) A2

F03G 7/08

(21) P20040053 (22) 21.04.2004

(42) 12.07.2004

(71) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռոբերտ
Խանոյան (AM), Վարդան Յավրուճյան (AM), Ռու-
դիկ Շխիկյան (AM)

(72) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռոբերտ
Խանոյան (AM), Վարդան Յավրուճյան (AM), Ռու-
դիկ Շխիկյան (AM)

(73) Կարեն Ալեքսանդրյան, Երեւան, Տերյան 59,
բն.20 (AM), Ռոբերտ Խանոյան, Երեւան, Խանջյան
37, բն.5 (AM), Վարդան Յավրուճյան, Երեւան,
Ա.Խաչատրյան 12, բն. 99 (AM), Ռուդիկ Շխիկյան,
Երեւան, Բայրոնի 12, բն. 16 (AM)

(54) Էներգիայի ստացման սարք

(57) Գյուտը վերաբերում է մեխանիկայի բնա-
զավառին, մասնավորապես՝ շարժվող տրանս-
պորտային միջոցների օգտագործմամբ էներգիայի
ստացմանը:

Սարքն ունի ճնշում հաղորդող մեխանիզմ
երկու հարթակ, որոնք տեղակայված են ճանա-
պարհի մակերեսային: Հարթակները հողակա-
պերով միակցված են ճանապարհի մակերեսային
տակ տեղակայված ճոճալծակի բազուկներին:
ճոճալծակի կենտրոնը կոշտ միակցված է
երկկողմ պտտվող լիսեռի ծայրին: Լիսեռի
մյուս ծայրը միակցված է երկկողմ պտտական
շարժումը միակողմ շարժման կերպափոխող
հանգույցին, որին միակցված է միակողմ պտտվող
լիսեռի մի ծայրը: Դրա մյուս ծայրը միակցված է
մեխանիկական էներգիայի կուտակչին: Հարթակ-
ները ճոճալծակի բազուկների բարձրացման
ժամանակ վերածվում են թեք հարթությունների:
Մեքենան, ընթանալով այդ հարթությամբ, ճնշում
է գործադրում դրա վրա, որի հետեւանքով
ճոճալծակի բազուկը իջնում է ներքե՝ շարժում
հաղորդելով երկկողմ պտտվող լիսեռին: Միաժա-

մանակ բարձրանում է մյուս բազուկը, եւ ցիկլը
կրկնվում է: Ճնշում հաղորդող մեխանիզմ կարող
են հանդիսանալ նաեւ ճոճալծակի բազուկների
ծայրերին տեղակայված մագնիսները:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 2 նկ.:

(51) 7 F16H 3/44 (11) 1592 (13) A2

(21) P20040068 (22) 03.06.2004

(31) P20040065 (32) 31.05.2004

(33) AM

(42) 11.08.2004

(71) Արման Սարգսյան (RU)

(72) Արման Սարգսյան (RU)

(73) Արման Սարգսյան (RU)

(54) Մոլորակային ավտոմատ փոխանցիչ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը,
մասնավորապես՝ փոխանցիչներին:

Մոլորակային ավտոմատ փոխանցիչն ունի
մոլորակային մեխանիզմ՝ կազմված արեգակնային
անվից, տարիչից եւ առնվազն մեկ սատելիտից,
ու տանող եւ տարվող լիսեռներ, որոնք իրար
կապված են մոլորակային մեխանիզմի եւ ուժա-
յին շղթայում տեղակայված զսպանակի միջոցով:
Տարիչն ունի առնվազն մեկ ուղղորդիչ, որի
մեջ տեղաշարժվելու հնարավորությամբ տեղա-
կայված է սատելիտի հետ կառչման մեջ գտնվող
ատամնաձող: Ապահովվում է փոխանցվող ուղորդ
մոմենտի մեծության անաստիճան փոփոխումը,
9 նկ.:

(74) Ա. Պետրոսյան

(51) 7 F24J 02/00 (11) 1593 (13) A2

(21) P20020184 (22) 11.11.2002

(42) 11.06.2003

(71) Հենրիկ Մխիթարյան (AM), Հրանտ Մխիթարյան
(AM), Կարեն Մխիթարյան (AM)

(72) Հենրիկ Մխիթարյան (AM), Հրանտ Մխիթարյան
(AM), Կարեն Մխիթարյան (AM)

(73) Հենրիկ Մխիթարյան, Երեւան, Աջափնյակ,

Սիլիկյան թաղ., 7-րդ փող. 23 (AM), Հրանտ Մխիթարյան, Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղ., 7-րդ փող. 23 (AM), Կարեն Մխիթարյան, Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղ. 7-րդ փող. 23 (AM)

(54) Օդի հոսքի առաջացման եւ նրանից էներգիայի ստացման համալիր կայանք

(57) Գյուտը վերաբերում է հեղիոտեխնիկային, մասնավորապես՝ արեգակի էներգիայի միջոցով օդի հոսք ստանալու եւ նրա միջոցով էներգիա ստանալու կայանքներին: Կայանքն ունի արեգակնային օդատաքացուցիչ, որն ունի սառը եւ տաք օդի թունելախորշեր: Տաք օդի հոսքագծի վրա տեղակայված են քանու տուրբիններ: Կայանքն ունի բարձրության վրա տեղադրված սառը ջրի ջրամբար, որը խողովակաշարով միակցված է տաք օդի թունելախորշում տեղակայված զիգագաձեւ ջերմափոխանակման տարրին: Ավելի ցածր մակարդակի վրա տեղակայված են տաք ջրի պահեստարանը եւ հեղուկի արեգակնային տաքացուցիչը: Տաք ջրի պահեստարանը եւ տաք օդի թունելախորշում տեղակայված զիգագաձեւ ջերմափոխանակման տարրը կապված են խողովակաշարով: Ենթադրվում է ապահովել կայանքի աշխատանքի անընդհատությունը, 8 նկ.:

(51) 7 G01B 3/56 (11) 1594 (13) A2

(21) P20040067 (22) 03.06.2004

(42) 12.10.2004

(71) Սեյրան Կոխլիկյան (AM)

(72) Մամիկոն Սողոյան (AM), Սեյրան Կոխլիկյան (AM)

(73) Սեյրան Կոխլիկյան, Երեւան, Ահարոնյան 7, բն. 11 (AM)

(54) Կոնական մակերեսային արտաքին կոնավորության չափման սարք

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ տեխնիկական չափումներին եւ կարող է օգտագործվել մեքենամասերի կոնական մակերեսային արտաքին կոնավորությունը չափելու համար:

Չափման սարքն ունի կոշտ ուղղանկյուն անկյունականոն, որի հորիզոնական հարթակի վրա տեղադրվում է չափվող կոնը: Ուղղանկյուն անկյունականոնի ուղղաձիգ պատի վրա արված է անցք, որի նվազագույն հեռավորությունը անկյունականոնի հորիզոնական հարթակից գտնվում է որոշակի բարձրության վրա: Անցքում տեղակայված է գծային չափերի չափման գործիք: Չափման գործիքի միջոցով որոշում են չափվող կոնի հիմքի եւ կոնի չափվող տեղամասի տրամագծերի տարբերությունը, որից հետո համապատասխան բանաձեւով որոշում կոնավորությունը: Պարզեցվում է սարքի կառուցվածքը, նվազեցվում է չափման տեւողությունը, բարձրացվում չափումների ճշգրտությունը, 1 նկ.:

(51) 7 G01B 3/56

(11) 1595

(13) A2

(21) P20040066

(22) 03.06.2004

(42) 12.10.2004

(71) Սեյրան Կոխլիկյան (AM)

(72) Մամիկոն Սողոյան (AM), Սեյրան Կոխլիկյան (AM)

(73) Սեյրան Կոխլիկյան, Երեւան, Ահարոնյան 7, բն. 11 (AM)

(54) Կոնական մակերեսային արտաքին կոնավորության չափման սարք

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ տեխնիկական չափումներին եւ կարող է օգտագործվել պատրաստվածքների մշակման ժամանակ կոնական մակերեսային արտաքին կոնավորությունը չափելու համար:

Չափման սարքն ունի սնամեջ եւ հոծ լիսեռներ, երկու հոլովակ, որոնք ունեն միեւնոյն տրամագիծը: Լիսեռները տեղադրված են իրար մեջ մի առանցքի վրա եւ զուգահեռ են հետագոտվող կոնի ծնիչին: Հոլովակները որոշակի հեռավորության վրա անշարժ ամրակցված են մեկը՝ սնամեջ լիսեռի, մյուսը՝ հոծ լիսեռի վրա: Նախքան չափումներ կատարելը սարքը կարգավորում են ստուգանուշային կոնի օգնությամբ: Չափման ընթացքում հոլովակներն

ստանում են տարբեր արագություններ, որոնք փոխանցվում են լիսեռներին: Արագությունների տարբերությունը ֆիքսում են լիսեռների ճակատին արված աստիճանավորման խազերի միջոցով, որից հետո համապատասխան բանաձևի միջոցով որոշում կոնավորությունը:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, բարձրացվում է չափումների ճշգրտությունը, 1 նկ.:

(51) 7 G01L 9/08 (11) 1596 (13) A2
G01L 27/00
(21) P20040048 (22) 13.04.2004
(42) 12.07.2004
(71) Վարդան Վարդանյան (AM)
(72) Վարդան Վարդանյան (AM)
(73) Վարդան Վարդանյան, Երևան, Զաքյան 3, բն. 94 (AM)
(54) ճնշման պիեզոռեզոնանսային հայտնիչ
(57) Հայտնիչն ունի հերմետիկ փակ խոռոչ ունեցող իրան, երկու մեմբրան՝ յուրաքանչյուրը փակված կափարիչով, հավասարաբազուկ լծակ, որի ծայրերը միջնաձողիկով միակցված են մեմբրանների կենտրոնների հետ: Կափարիչներից մեկն ունի առաջին եւ երկրորդ խողովակաոստփականներ եւ համապատասխան մեմբրանի հետ ձեւավորում է հայտնիչի ընդունող խուցը: Հավասարաբազուկ լծակի հենարանի երկու կողմում հավասարահեռ, լծակի եւ իրանի միջեւ վակուումի պայմաններում ամրակցված է երկու պիեզոտարր: Պիեզոտարրերը հենված են կոշտ կենտրոն ունեցող մեմբրաններին, որոնց դիրքը սեւեռված է իրանի արտաքին մասում ամրակցված հատած կոնական ճակատ ունեցող վռաններով: Կոշտ կենտրոն ունեցող մեմբրանները ամրակցված են իրանին միակցված երկու անհավասարաչափ լծակի կարճ բազուկների ծայրերին: Հայտնիչի ելքային հաճախականությունները ճշգրտվում են յուրաքանչյուր պիեզոտարրի սեղմման աստիճանի նրբին կարգավորումով՝ պայմանավորված անհավասարաչափ լծակի համապատասխան կարճ բազուկի ծայրի միկրոմետրիկական տեղաշարժով:

Ապահովվում է նուրբ միկրոմետրիկական կարգավորում, բարձրացվում է չափումների ճշգրտությունը, 2 նկ.:

(51) 7 G01R 31/00 (11) 1597 (13) A2
(21) P20040096 (22) 30.07.2004
(42) 12.10.2004
(71) Արմեն Ստեփանյան (AM), Վլադիմիր Հարությունյան (AM)
(72) Արմեն Ստեփանյան (AM), Վլադիմիր Հարությունյան (AM)
(73) Արմեն Ստեփանյան, Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ, Չարենցի 38 (AM), Վլադիմիր Հարությունյան, Երևան, Նալբանդյան 17, բն. 18 (AM)
(54) Փոփոխական էլեկտրական ազդանշանի հաճախության չափման եղանակ
(57) Դիտարկվող ազդանշանը վերածում են իմպուլսների հաջորդականության եւ տալիս այն միեւնույն ժամանակային շեղումներով 1,2,...,k չափիչ բլոկների մուտքերին, որոնց միջոցով հաշվարկում են իմպուլսների քանակը չափման ժամանակամիջոցում, որի սկիզբը եւ ավարտը սինքրոնացված են դիտարկվող ազդանշանի իմպուլսների հետ, ֆիքսում են այդ ժամանակամիջոցը, իսկ ազդանշանի հաճախությունը որոշում են իմպուլսների քանակի և չափման ժամանակամիջոցի հարաբերությամբ: Յուրաքանչյուր չափիչ բլոկում ազդանշանի հաճախության հաշվարկումը կատարում են մյուս չափիչ բլոկների աշխատանքի ընթացքում, ընդ որում k-րդ չափիչ բլոկի աշխատանքը սկսելուց հետո իմպուլսների հաջորդականությունը նույն ժամանակային շեղումով նորից տալիս են առաջին չափիչ բլոկին եւ այնուհետեւ կրկնում ամբողջ աշխատանքային ցիկլը: Ապահովվում է հաճախության չափում առանց ընդհատման, բարձրացվում է չափումների ճշգրտությունը եւ արագությունը, 5 նկ.:

(51) 7 G01R 31/12 (11) 1598 (13) A2
(21) P20040054 (22) 21.04.2004
(42) 11.06.2004

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Մարատ Մաթևոսյան (AM), Էդուարդ Մարտիկյան (AM), Արմեն Հովհաննիսյան (AM), Հայկ Հակոբյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Աբսորբման ունակության որոշման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ դիէլեկտրական նյութերի եւ էլեկտրամեկուսիչ կոնստրուկցիաների էլեկտրական բնութագրերի որոշմանը եւ դրանց որակի գնահատմանը:

Նախապես ընտրված հաստատուն լարման տակ նմուշը լիցքավորում են, երկու կարճ միակցումներից հետո գրանցում են համապատասխան վերականգնված լարումների առավելագույն արժեքները: Այնուհետեւ նմուշը ինքնալիցքաթափվում է, որի ընթացքում գրանցում են լարման համապատասխան արժեքները, որոնց օգնությամբ կառուցում են ինքնալիցքաթափման ցուցչային ֆունկցիայի կորը, այն ենթարկում արտարկման եւ գրաֆիկորեն որոշում վերականգնված լարման իրական առավելագույն արժեքը: Աբսորբման ունակությունը եւ աբսորբման պրոցեսին մասնակցող լիցքի արժեքը որոշում են համապատասխան բանաձևերով:

Բարձրացվում է որակի գնահատման ճշգրտությունը, 2 նկ.:

(51) 7 G03C 1/00 (11) 1599 (13) A2
C01D 17/00

(21) P20030103 (22) 27.08.2003

(42) 11.05.2004

(71) Ալաիկ Սկրտչյան (AM), Արտակ Սկրտչյան (AM)

(72) Ալաիկ Սկրտչյան (AM), Արտակ Սկրտչյան (AM)

(73) Ալաիկ Սկրտչյան, Երեւան, Հր.Քոչարի 20, բն. 3 (AM), Արտակ Սկրտչյան, Երեւան, Բաղրամյան 56, բն. 33 (AM)

(54) Ռենտգենազգայուն ծակոտկեն նյութ

(57) Գյուտը վերաբերում է լուսազգայուն նյութերի ստացմանը, մասնավորապես՝ ռենտգենյան ճառագայթման գրանցման համար:

Ռենտգենազգայուն ծակոտկեն նյութը պարունակում է ցեզիումի յոդիդ, սիլիցիումի օքսիդ եւ էլեկտրահաղորդիչ նյութ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, զանգ. %.

ցեզիումի յոդիդ 60-70

սիլիցիումի օքսիդ 25-30

էլեկտրահաղորդիչ նյութ 0,5-1

Բարձրացվում է ռենտգենյան ճառագայթման գրանցման արդյունավետությունը:

(51) 7 G06K 7/08 (11) 1600 (13) A2

(21) P20040062 (22) 25.05.2004

(42) 11.08.2004

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Վարուժան Հակոբյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Երկձեւ պիեզոէլեկտրական կառուցվածքներում տեղեկատվության վերարտադրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հաշվողական տեխնիկային ու ավտոմատիկային եւ կարող է կիրառվել պիեզոէլեկտրոնային կառավարման համակարգերում:

Երկձեւ պիեզոկառուցվածքներում ենթաէլեկտրոդային տիրույթների մնացորդային բեւեռացման աստիճանի փոփոխմամբ գրանցված տեղեկատվության վերարտադրման համար գրգռում են քվադրիբեզոնանսային տատանումներ, ձեւավորում գրգռման ազդանշաններով սինքրոնացված պիեզոկառուցվածքի վերարտադրման ելքային ու ստորաբավորման ազդանշաններ: Ստորաբավորման ազդանշաններով ձեւավորում են ստորաբավորման

